ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 49 - Ա **30 մարտի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13 - Ի N 27 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի փետրվարի 13-ի <<Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող մարզային մշտական գործող հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին>> N 27–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրելու համար ստեղծել մարզային մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Խլղաթյան Սևակ	- մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, հանձնաժողովի նախագահ
Պողոսյան Անուշ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ հանձնաժողովի քարտուղար
Ցոգոլակյան Սուսաննա	- մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի վարիչ
Խաչատրյան Սուրիկ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ

Խաչատրյան Վիգեն - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ

Օհանյան Հրանդիկ - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍԳՀ բաժնի վարիչ

Ստեփանյան Արայիկ - Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ